

ԳՐԱԽՈՍՈՍԱԿԱՆ

«Մեր Դպրոցը», ձեռագիր այր-
բնարան և ընթերցարան, արտա-
գրութեան որինակներով, կազ-
մեցին մի խումբ ուսուցիչներ:

Այս ճոխ և էժան հրատարակու-
թիւնը իր արտաքինով իսկոյն աչքի
է ընկնում: Իսկ արդեօք իր ներքին
արժանիքներով էլ հանդիսանձեւ է որ-
պէս մի նորութիւն. ահա ինձ հետա-
քըքրողը աւելի այս հանգամանքն էր,
մանաւանդ զրքի այրբնարանական
բաժինը, որ ընթերցարանից բոլորո-
վին ջոկ արհեստ է, բայց որ մեզա-
նում իր բոլոր ծանրութեամբ լրջօրէն
չի կշռադատում:

Վերջին տասնեակ տարւայ մէջ քա-
նի տեսակ այրբնարաններ լոյս եկան.
նրանք սունկի պէս բուսան, բայց ար-
դեօք հայ մանկավարժութիւնը նոյն
արագութեամբ առնջ գնաց, թէ շար-
չիական մրցութեան մէջ միշտ անշարժ
կէտի վրայ է հանգստանում: Զօփա-
զանցութիւն չի լինի ասել, թէ մեր
մանկավարժները՝ ուսուցիչները, դա-
սագիրք կազմողները, քննադատները՝
առհասարակ նմանում են էն դալլաք
հեքիմներին, որոնք թէպէտ հոտառու-
թեամբ գրում են, որ մի լաւ միջոց
կայ օխտահանութեան համար—բորա-
թթուկը, բայց վէրքը բանալուց յի-
տոյ, հենց թարամխոտ բաժրակը թըր-
ջում են նոյն թթուկի մէջ, որպէս զի
նրանով իրրև թէ մարբին աղտոտած
նշտրակը: Մեր մանկավարժներն էլ
լաւ վարժւած են իրենց մի ձեռքով
շինածը միւսով քանդելու: Նրանք զի-
տեն, թէ գրագիտութեան յաջողու-
թեան արգելքները որոնք են, բայց և
այնպէս աւանդութեան գայթակղիչ
շաւիղներից դուրս չեն գալիս. ամեն
բան կիսատ միջոցներով են ձեռնար-
կում, միշտ սկսածը կէս ճամբին են
թողնում, ակնյայտնի փորձերից խրատ-
ւել չեն ուզում:

Ինչով է տարբերում «Մեր Դպրոցը»
լիսիցեանի «Լուսարբերից» ըստ էութեան:
Արտաքուստ՝ շատ բանով, բայց
ըստ էութեան՝ ոչնչով. նոյն կիսատ
միջոցներ, նոյն կիսատ սկզբունք-
ներ, նոյն ձախող հետևանքներ:

«Լուսարբերը», «Մեր Դպրոցը» և
դրանց նմանիքները հնչական մեթոդին
են հետևում, անշուշտ էն համոզմամբ,
թէ հենց էդ մեթոդն է եղել, որ կա-
րողացաւ համատարած գործածութիւ-
նից դուրս ձգել երբեմնակի այրժէճէ-
նայի մահաշունչ մեթոդը: Էս ու-
ղիղ է, սակայն հնչական մեթո-
դը յօնքը շինելու տեղ աչքն էլ
դուրս է հանում, որ մեր պարոն ման-
կավարժները տղիտարար չեն նկա-
տում: Այրժէճէնայի նախկին միջո-
ցաբանում մանուկը մտաւորապէս խեղդ-
ւում էր, լեզու չէր բանեցնում, այլ
ամիսներ ու տարիներ քա-րե-րի-բո-
բու աղճուկներ հանելու էր ստիպում:
Արդ, հնչական մեթոդն արդեօք սկսեց
կեցողանի յեզու գործածել,—հը, նա
հնարեց լսպէս կաշւած «այրբնարա-
նական բաժին», այսինքն անխորհուրդ
բառերի և անկապ նախադասութիւն-

